



Armenian General Benevolent Union of Canada Inc. Toronto, Ontario

P.O. Box 975, Station "A" - Toronto, Ontario M5W 1G5

Թորոնթո, 10 Ապրիլ 1981.

Մեծայարգ

Տիար Ատենապետ եւ Յարգելի Անդամներ՝

Ս.Նրրորդութիւն Հայց.Նկեղեցւոյ ծխական խորհուրդի,

Թորոնթո.

Յարգելի Տիարք,

Ինչպէս ծանօթ է ձեզի, Միութեանս Ալեք Մանուկեան Մշակութային
Կեդրոնի շինութիւնը մօտ ատենէն կը հասնի լրումին:

Երբ շինութիւն մը կը հասնի սոյն հանգրուանին, շինարարական ըն-
կերութեանց վճարումները պէտք է կատարել անյապաղ, խուսափելու համար
յաւելեալ ծախսերէ:

Կացութիւնը մեզի համար շատ լուրջ է, եւ կողքենք զայն բաժնել
ձեզի հետ, յիշեցնելով թէ Ս.Նրրորդ. Հայց. Նկեղեցւոյ համար մեր կողմէ
գնուած հողը, որուն փոխարժէքը 3 տարուայ առաջուայ սակերով մօտաւորա-
պէս 250.000 տոլար էր իւրաքանչիւր արտավարի համար, այսօրուայ գիներով
կը գնահատուի մօտ 600.000 տոլար:

Արդ՝ կը խնդրենք պատուարժան ծխական խորհուրդէդ որ կարելի եղածին
չափ արագ շարժելով, կառավարական ձեւակերպութեանց սկսիք, եւ այդ հողի
համար նախատեսուած գումարէն տակաւ չվճարուած մասին, որ կը ներկայացնէ
մօտ 210.000 տոլար, գէթ կէսը անմիջապէս վճարէք Միութեանս:

Կը ցաւինք նաեւ ըսելու որ հակառակ պարագային, վարչութիւնս ստիպ-
ուած պիտի ըլլայ դրամատուներու դիմել փոխատուութեան համար, եւ ինչպէս
կրնաք երեւակայել այսօրուայ սակերով բաւական մեծ յանձնառութեանց տակ
պիտի ստիպուինք մտնել, եւ պիտի պարտադրուինք, ապագային, ցաւ ի սիրտ, այդ
գումարն ալ աւելցնել ձեր մեզի ունեցած պարտքին, ինչ որ եկեղեցւոյդ
համար կենթադրէ յաւելեալ մի քանի տասնեակ տոլարներու ծախս մը:

Վստահ ենք թէ դուք ալ, ինչպէս մենք, կողքէք խուսափիլ նման յաւել-
եալ ծախսերէ եւ թէ ձեր լաւագոյնը պիտի ընէք շատ մօտիկ ապագային, պէտք



Armenian General Benevolent Union of Canada Inc. Toronto, Ontario

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՆԵՐԱԼ ԲԵՆԵՎՈԼԵՆՏ ԿԱՅԱՐԵՒԻՆՈՒՆԻ ՄԻԱՅԻՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԱԴԱՆԻ ԻՆՍՏԻՏՍՅՈՒՆ

P.O. Box 975, Station "A" - Toronto, Ontario M5W 1G5

շար.2-

եղած վճարումը կատարելու:

Սպասելով ձեր շուտափոյթ պատասխանին եւ ձեր Աստուածահաճոյ գործունէութեան յաջողութեան մաղթանքներով,

Յարգանօք՝

ի դիմաց

Հ.Բ.Ը.Մ.ի Թորոնթոյի Վարչութեան

Ա. դպիր

Ա. պետ

Ս. Տէքրրմէնճեան

Պ. Զիլինկիրեան